# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

**ք.Եղեգնաձոր**

N 23

10 մայիսի 2019թ.

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԳԼԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 364-Ա հրամանը՝

**Որոշում եմ**

1. Հաստատել 2019 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Իրավական և մասնագիտական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի փետրվարի 10-ի N 01/15/577-14 և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականներով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված հսկողության հարցաշարերով:

Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն իրականացնելիս ուղղորդվել նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 22.09.2017 թվականի թիվ 01/17.1/6020-17 հանձնարարականով ներկայացված հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ 2019 թվականի երկրորդ եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ներկայացնել տվյալ եռամսյակում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2019

թվականի մայիսի 10-ի թիվ 23 որոշման

2019 թվականի երկրորդ եռամսյակում Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքում իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը

| h/h | Համայնքի անվանում | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության ժամանակահատվածը | Իրականացվելիք իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ | Իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ) | Անուն, ազգանուն |
| 2-րդ եռամսյակ | | | | | |
| 1 | Գլաձոր | 13.05.2019թ.-<br>24.05.2019թ. | Ուսուցման բնագավառ | ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Աղվան Հարությունյան |
| | | | Սոցիալական պաշտպանության բնագավառ | Սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ,<br><br>Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ, | Ցողիկ Բաբայան,<br><br>Լյուսյա Պողոսյան |
| | | | Պաշտպանության բնագավառ | Զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ, | Վանիկ Խուդավերդյան |
| | | | Հողօգտագործման բնագավառ | Հողաշինության և հողօգտագործման բաժին մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Սմբատ Ալիխանյան |
| | | | Անասնաբուժության | Գյուղատնտեսության և | Գոհար Հաչատրյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բնագավառ | բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | |
| | | | Արտակարգ իրավիճակների բնագավառ | ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Ռուստամ Զոհրաբյան |
| | | | Առևտրի և ծառայությունների բնագավառ | Զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ, | Արամ Կոստանյան |
| | | | Մշակույթի բնագավառ | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ, | Աղասի Հովհաննիսյան |
| | | | Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ, | Աղասի Հովհաննիսյան |
| | | | Կրթության բնագավառ | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ, | Անահիտ Միրզոյան |
| | | | Առողջապահության բնագավառ | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ | Լիլիա Կարապետյան |
| | | | Քաղաքաշինության բնագավառ | Քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ՝ աշխատանքային խմբի անդամ | Ռուբիկ Մինասյան |
| | | | Տրանսպորտի և կապի բնագավառ | Քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Խաչիկ Ասլանյան |
| | | | Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների նկատմամբ իրականացվող | ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ՝ աշխատանքային խմբի ղեկավար | Աղվան Հարությունյան |
| | | | | Իրավաբանական բաժնի պետ՝ աշխատանքային խմբի անդամ | Նարինե Մաղաքյան |
| | | | | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական | Շահեն Վարդանյան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | իրավական և մասնագիտական հսկողության բնագավառ | զարգացման վարչության պետ՝ աշխատանքային խմբի անդամ | |

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Կ. ՍԱՀԱԿՅԱՆ